2003, ՀՈՒԼԻՍ Ա, ԹԻՎ 13 (153)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով եւ օրհնությամբ ողջունում ենք համայն մեր ժողովրդին եւ շնորհավորում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրվա առիթով:*

*Սահմանադրության ընդունման պատմական իրողությունը խորհուրդ է այլեւս, որը խտացնում է մեր ժողովրդի ազատության ու հայրենյաց սերը, ազգային պետականությունը վերագտնելու դարավոր երազը եւ այն մարմնավորված տեսնելու երջանկությունը՝ իբրեւ Աստվածային օրհնություն:*

*Սահմանադրությունը օրինահարգության մեր ձգտումն է, որպեսզի մեր հնավուրց հողում արդարության եւ իրավունքի պաշտպանությամբ ծաղկի խաղաղ կյանքը, եւ մեր զավակները միշտ վստահությամբ ու լավատեսությամբ նայեն գալիքին: Արդ, սիրելի հայորդիք, զորանանք այս տոնական օրվա սրբազան խորհրդով եւ ողջունենք մեր հանապազորը, քանզի շնորհընկալ ենք հայոց ազատ երկնքին նայելու: Հավատավոր հոգով ջանանք ու գործենք ի սեր ազատ ու անկախ Հայաստանի անշրջելի առաջընթացության ու բարօրության:*

*Թող Բարձրյալն Աստված օրհնի հայրենակերտումի մեր ճանապարհը, մեր պարտքի մեջ զորացնի մեզ բոլորիս եւ ի բարին առաջնորդի մեր ընթացքը:*

*Սէր եւ խաղաղութիւն Աստուծոյ եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեանս. ամէն:*



### Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Կանադա-Հայաստան բարեկամության պատգամավորական խմբի անդամներին

Հուլիսի 4-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կանադայի խորհրդարանի Կանադա-Հայաստան բարեկամության պատգամավորական խմբի անդամներին՝ Կանադայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արա Պապյանի ուղեկցությամբ:

Նորին Սրբությունը ողջունեց երկու երկրների խորհրդարանների միջեւ ստեղծված բարեկամական կապերը՝ վստահությամբ, որ նմանատիպ փոխհարաբերությունները նպաստում են ժողովրդական արժեքների հաստատմանը Հայաստանի երիտասարդ հանրապետությունում:

Անդրադարձ եղավ նաեւ մարդկության դեմ իրականացված հանցագործությունների՝ մասնավորապես Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման կարեւորությանը այլ երկրների պառլամենտների կողմից, ինչը կկանխի նման ողբերգության կրկնությունը որեւէ այլ ազգի նկատմամբ:

Զրույցի ընթացքում հյուրերը Վեհափառ Հայրապետին ներկայացրեցին խմբի աշխատանքները, հետաքրքրվեցին Հայ Եկեղեցու գործունեությամբ:

### Ձեռամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օծվեց Կոտայքի մարզի Թեղենիք գյուղի նորակառույց Սրբոց Նահատակաց եկեղեցին



Հուլիսի 5-ին Հայաստանյայց Առաքելական Սբ. եկեղեցու Կոտայքի թեմում, ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ ընթերակա եպիսկոպոսների, օծվեց Թեղենիք գյուղի նորակառույց Սրբոց Նահատակաց եկեղեցին:

Եկեղեցին կառուցվել է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միաբան Տ. Ներսես արք. Պոզապալյանի եւ Պոզապալյան ընտանիքի հովանավորությամբ ու ջանքերով եւ Շվեյցարաբնակ բարերարներ Գաբրիելյանների աջակցությամբ: Եկեղեցու հիմնարկեքը կատարվել էր երեք տարի առաջ՝ ձեռամբ Ներսես սրբազանի:

Օծման արարողությանը մասնակցում էին Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանը, Մայր Աթոռի միաբաններ, Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգելդյանը, մարզային եւ քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ:

Սրբազան արարողությունից հետո Վեհափառ Հայրապետն իր շնորհավորանքի խոսքն ուղղեց ներկաներին՝ նշելով. «Մենք փառք եւ գոհություն ենք առ Աստված բարձրացնում, որ երկար տարիներ հոգեւոր կյանքից, աղոթատներից զուրկ այս տարածաշրջանում ահա մի նոր եկեղեցի է կառուցվում եւ իր դռները բացում հավատացյալ մեր ժողովրդի առջեւ՝ շնորհիվ գերաշնորհ Տ. Ներսես արք. Պոզապալյանի ջանքերի ու նվիրումի: Մեր աղոթքն է, որպեսզի մեր ժողովրդի զավակներն ապրեն իրենց կյանքը եկեղեցու կամարների ներքո եւ առաջնորդվեն եկեղեցու սուրբ խորանից բացվող՝ Քրիստոսի սուրբ Ավետարանի պատգամներով ու պատվիրաններով, մեր հայրերի սրբազան հավատքով, հավատարիմ դարավոր մեր ավանդույթներին ու սովորույթներին, որպեսզի հայոց կյանքում այլեւս երբեք չլինեն նահատակության շրջաններ»:

Ի գնահատումն սրբազան հոր գեղեցիկ այդ իրագործման՝ Նորին Սրբությունը նրան պարգեւատրեց Հայ եկեղեցու բարձրագույն՝ «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» պատվո շքանշանով, իսկ նորաօծ եկեղեցուն նվիրեց Սբ. Հաղորդության սկիհ:

Սրբոց Նահատակաց եկեղեցու օծման ավարտին Տ. Ներսես արք. Պոզապալյանը մատուցեց անդրանիկ Սբ. Պատարագ:



### Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց միջազգային իրավունքի հարցերին նվիրված գիտաժողովի մասնակիցներին

Հուլիսի 3-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՊՀ երկրների իրավաբանների միջազգային միության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության դատական կառույցների մի խումբ իրավաբանների՝ միջազգային իրավունքի հարցերին նվիրված երեւանյան գիտաժողովի մասնակիցներին:

Վեհափառ Հայրապետն իր մաղթանքն ու օրհնությունը տվեց հյուրերին՝ նշելով, որ նմանատիպ ժողովներն աշխատանքային փորձառության փոխանակման կարեւոր միջոց լինելու հետ մեկտեղ նպաստում են երկրների միջեւ եղբայրության ու փոխհասկացողության մթնոլորտի ձեւավորմանը:

### ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգը զարմանքով ծանոթացավ «Այբ-Ֆե» օրաթերթի ս. թ. հուլիսի 2-ի համարի «Հայաստանը՝ օրենքով գողերի հավաքատեղի», ինչպես նաեւ «Չորրորդ իշխանություն» թերթի ս. թ. հուլիսի 4-ի համարի «Թռիչքներ երազում եւ արթմնի», «Օրհնեալ է զխոդկան...» վերնագրված հրապարակումներին:**

**«Այբ-Ֆե»-ի հրապարակման մեջ մասնավորապես նշված է, թե Սվոյ Ռաֆի մահվան 10-րդ տարելիցի կապակցությամբ Հայաստան ժամանած օրենքով գողերին ընդունել է նաեւ Ամենայն Հայոց կաթողիկոսը, իսկ երկրորդ թերթի հրապարակումներում անսանձ արտահայտություններով ու չարամտությամբ փորձ է արվում այլեւս պատկերել կարծեցյալ հանդիպման մանրամասները:**

**Աթոռիս Տեղեկատվական համակարգը, որեւէ անհատի ընդունելությունը Հայրապետի կողմից անհամատեղելի չնկատելով եկեղեցու առաքելության հետ, հայտարարում է, թե հրապարակվածներն ակնհայտ կեղծիք են՝ զրպարտանք, բացարձակորեն չեն համապատասխանում իրականությանը եւ պարունակում են ստահոդ միտումնավորություն: Միաժամանակ հորդորում է՝ ամենայն լրջությամբ եւ պատասխանատվությամբ իրականացնել հասարակությանը ճիշտ եւ առարկայական տեղեկատվություն ապահովելու լրագրողական պարտականությունները եւ չտրվել մտացածին հրապարակումներով կարծեցյալ հեղինակություն ձեռք բերելու գայթակղությանը:**

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԵԶՐ Ա ՓԱՌԱԺՆԱԿԵՐՏՑԻ

## (630-641)

*Սկիզբը՝ էջ 3*

Անկախ այն հանգամանքից, որ Հայոց եկեղեցին բնավ էլ չէր ճյուղավորվել հունական եկեղեցուց, եւ Թեոդորոսը պարզապես ծուռ հայելու մեջ էր ներկայացնում իրականությունը, առաջարկն ընդունվեց, եւ Եզրը կայսրին հայտնեց, որ իրենք ընդունում են Հավատի գիրը եւ պատրաստ են այն ստորագրել, ինչը մեծ ուրախություն պատճառեց Հերակլին: Կարնո եկեղեցում հանդիսավոր արարողություն կատարվեց, որին մասնակցեցին հայերը՝ Եզրի գլխավորությամբ, եւ հույները՝ Հերակլի առաջնորդությամբ: Հերակլը եւ Եզրը պատարագի ժամանակ միասին հաղորդվեցին, եւ այս ձեւով կարծես թե կրկին ծնունդ առավ հայ-հունական դավանական միասնությունը: Արտահայտելով իր գոհունակությունը՝ Հերակլը Եզրին տվեց Կողբ գյուղաքաղաքի երրորդ մասը եւ աղահանքն ամբողջությամբ, իսկ այլ տվյալների համաձայն՝ թերեւս նաեւ Աղձքը: Դավանական միասնությունը, այնուամենայնիվ, գլուխ չեկավ, սակայն Էջմիածնի կաթողիկոսարանը մինչեւ XX դարի սկզբներն օգտվում էր Կողբից անվճար աղ ստանալու իրավունքից:

Հայ պատմիչների երկերում Եզր կաթողիկոսը, որպես կանոն, խիստ քննադատվում է իր բռնած դիրքի պատճառով, եւ միայն Սեբեոսն է, որ գրում է, թե Հայոց կաթողիկոսը մեծ շուքով վերադարձավ Դվին: Թե ինչով էր պայմանավորված Սեբեոսի նման վերաբերմունքը, դժվար է ասել: Գուցե, ինչպես Մ. Օրմանյանն է ենթադրում, նա Եզրի համախոհներից էր, եւ պատահական չէ, որ կողմնակալ գոհունակությամբ նկարագրել էր Քրիստափոր հայրապետի պաշտոնանկությունը եւ Եզրի ընտրությունը: Սակայն մյուս պատմիչները՝ Հովհաննես Դրասխանակերտցին, Ասողիկը, Սամվել Անեցին, Վարդան Արեւելցին, Կիրակոս Գանձակեցին, Ստեփանոս Օրբելյանը, խստիվ քննադատում են կաթողիկոսի բռնած դիրքը: Այսօր, երբ մենք դարերի բարձունքից ենք նայում Եզրի բռնած դիրքին եւ Կարնո հայ-հունական դավանական միությանը, ստիպված ենք արձանագրել, որ հավատո հիշյալ գրի հանդես գալը, թերեւս, պայմանավորված էր քաղաքական ծանր կացությամբ, հայերի՝ պարսիկների ուժի նկատմամբ ունեցած թերահավատությամբ, հույների օգնությամբ իրենց դիրքերը պահպանելու, ցավոք սրտի, սին ակնկալիքներով եւ, ինչու ոչ, հարավից ահագնացող արաբական մեծ վտանգով: Այդ կացությունն էր, որ ստիպեց մի այնպիսի մեծ հունատյացի, ինչպիսին էր Թեոդորոս Ռշտունին, համագործակցել հույների հետ:

Դատելով սկզբնաղբյուրների մեզ հասած կցկտուր տեղեկություններից՝ Հերակլ կայսեր Հավատի գիրը նզովում էր Նեստորին եւ բոլոր հերձվածողներին՝ բացառությամբ Քաղկեդոնի ժողովի: Մ. Օրմանյանը դրանից եզրակացնում է, որ Եզրի հավանությանն արժանացած փաստաթուղթը բացասական լռություն էր Քաղկեդոնի որոշումների նկատմամբ եւ ոչ թե հավանություն Քաղկեդոնի դավանության: Հայոց եկեղեցու պատմության մեծ գիտակը ցույց է տալիս, որ եթե Հայոց հայրապետն այդ կերպ զիջման էր գնացել Քաղկեդոնի հանդեպ ունեցած վերաբերմունքի հարցում, ապա կատարյալ երկաբնակության չէր գնացել եւ քաղկեդոնիկ չէր դարձել, քանի որ կայսրն էլ եւ նրան ուղեկցող հույն եպիսկոպոսները մաքուր քաղկեդոնիկներ չէին, այլ միակամյա դավանության ջատագովներ: Մի կամք եւ մի գործողության բացատրությունը մի բնություն էր նշանակում, եւ Հերակլ կայսրը հատուկ հրովարտակով միակամյայց վարդապետություն էր հաստատել երկրում՝ վավերացնել տալով այն Կոստանդնուպոլսի 638 թվականի հատուկ եկեղեցական ժողովով: Մի կամք եւ գործողության բանաձեւը հայերի կողմից, ամենայն հավանականությամբ, ընդունվում էր որպես միաբնակություն, եւ դրա հետեւանքով՝ Հավատի գիրը դառնում էր որպես կայսերական եկեղեցու կողմից զիջում, ուստի եւ ընդունելի, իսկ կայսեր եպիսկոպոսներն էլ, Քաղկեդոնի անունը պահելով, աշխատել էին չգրգռել քաղկեդոնականներին: Կար մի հանգամանք եւս, որ հայերը՝ ի դեմս Եզրի, Հավատի գիրն ընդունելով հանդերձ, մի պահ հրաժարվեցին հոգեւոր հաղորդությունից՝ մեղադրելով հույն հոգեւորականությանը պոռնկության եւ այլ պղծության մեջ: Հավատի գիրը Դվինում առանձին հակասությունների տեղիք չտվեց, եւ Եզրը հոգեւորականության մեծ մասի կողմից ընդունվեց հավուր պատշաճի, ինչը, անշուշտ, անհնարին կլիներ, եթե հասարակությունը քաղկեդոնիկ եկեղեցու կողմից որպես զիջում չնկատեր Հավատի գիրը:*Շարունակելի*



***Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ԵՐԱՆԻ *հեզերին*



*Սկիզբը՝ էջ 3*

*Ի՞նչն է հեզերի վարձատրությունը. ի՞նչ է «երկիրը ժառանգելը»:*

Աստվածաշնչի գրքերից մեկը՝ «Սաղմոսագիրքը», նույնպես խոսում է այս մասին: Սաղմոսներից մեկում (36-րդում) Դավիթ թագավորը տալիս է մի շարք խրատներ՝ չար մարդկանց չնախանձելու, բարի գործեր անելու, Տեր Աստծուն միշտ աղոթելու, ծառայելու եւ հնազանդ լինելու, ինչպես նաեւ չբարկանալու:

**Լռի՛ր բարկությունից,**- ասվում է այնտեղ,- **դադարեցրո՛ւ ջղայնությունդ եւ չարերին մի՛ նախանձիր: Որովհետեւ չարերը շուտով կոչնչանան, իսկ նրանք, ովքեր հույսը Տիրոջ վրա են դնում, կժառանգեն երկիրը: Փոքր-ինչ կանցնի, եւ ամբարիշտն այլեւս չի լինի, նրա տեղը կփնտրես ու չես գտնի: Իսկ նրանք, ովքեր հեզ են, կժառանգեն երկիրն ու մեծ խաղաղություն կվայելեն:**

Այս սաղմոսը սովորեցնում է, որ երբ մեզ չարիք են հասցնում, մենք բարկությամբ չպիտի պատասխանենք, վրեժ չպիտի լուծենք, այլ ծագած խնդիրը հանձնենք Տեր Աստծո տնօրինությանը, եւ Նա ամեն մարդուն իրեն արժանի պատասխանը կտա: Չար մարդիկ, միեւնույն է, իրենց պատիժը ստանալու են: Իսկ Աստծուն հավատարիմ մարդիկ միշտ պիտի հեզ լինեն եւ իրենց հեզությամբ անպայման կհաղթեն, որովհետեւ Աստված նրանց օգնության կգա: Միայն պետք է մի փոքր համբերել:

Երբ մարդ բարի գործ է անում եւ իր հույսն Աստծո վրա դնում, ինչ ձախորդություններ էլ, որ պատահեն, որքան էլ որ մարդիկ չարիքներ նյութեն նրա դեմ, միեւնույն է, նա, իր հույսն Աստծո վրա դնելով, ուստի հանգիստ սրտով, հեզությամբ, առանց չարին չարով հատուցելու, կարող է շատ բաների հասնել եւ իր բարի գործերում հաջողություն գտնել:

Որեւէ երկիր գրավելու համար մարդիկ սովորաբար պատերազմներ են մղում, շատ արյուն թափում, ավերածություններ անում: Սակայն քրիստոնյաները կարող են իրենց հեզ բարքով ու իմաստությամբ, աղոթքով ու համբերատարությամբ նույնպես երկրներ գրավել, միայն թե ոչ թե այդ երկրների հողերը, այլ մարդկանց սրտերը: Մարդկանց սրտերը գրավելը շատ մեծ ուժ է: Տեր Հիսուսի համբարձումից հետո Նրան հավատացող մարդիկ իրենց հավատքի համար շարունակ հալածվում էին, չարչարվում էին, սպանվում, նրանք չունեին ոչ զենք, ոչ զորքեր: Սակայն Քրիստոսի հավատքն արագորեն տարածվեց շատուշատ երկրներում, եւ ի վերջո շատ երկրներ քրիստոնյա դարձան, որոնց թվում առաջիններից մեկը՝ Հայաստանը: Չէ՞ որ Քրիստոսի առաքյալներն ու հետո նրանց աշակերտները ոչ մի զենք ու բանակ չունեին, բայց Աստծո օգնությամբ եւ իրենց հեզությամբ ու խոնարհությամբ, թեկուզ չարչարվելով ու սպանվելով, արդյունքում շատ երկրներ գրավեցին իրենց Տիրոջ եւ Թագավորի՝ Քրիստոսի համար: Քրիստոնյաներս հաճախ կոչվում ենք «Քրիստոսի զինվորներ», եւ մեր զենքը մեր բարի վարքն է՝ խոնարհությունը, հեզությունը, բարությունը, ողորմածությունը եւ այլն: Մեր զենքը Աստծո խոսքն է, այսինքն՝ Նրա պատվիրանները, երբ մենք դրանք կատարում ենք: Այս զենքով միշտ կարելի է հաղթանակի հասնել, եթե մենք Աստծուն հաճելի գործեր ենք անում եւ մեր հույսը դնում ենք Նրա վրա:

Աշխարհում մի տարածված խոսք կա, որը շատ հաճախ կարելի է լսել. «Նպատակն արդարացնում է միջոցները», այսինքն՝ եթե նպատակ ունես, դրան հասնելու համար կարող ես անել, ինչ ուզում ես, նույնիսկ կարող ես չար արարքներ թույլ տալ՝ սպանել, գողանալ, խաբել, միայն թե հասնես քո ուզածին: Սովորաբար շատ մարդիկ հենց այդ օրենքով էլ շարժվում են, դրա համար էլ աշխարհում շարունակ մարդիկ սպանում են միմյանց, հալածում, տանջում, գործում ամեն տեսակ անիրավություններ: Սակայն այս խոսք-օրենքը քրիստոնյաների համար անընդունելի է եւ Աստծուն հաճելի չէ: Աստված ասում է հակառակը. «Նպատակը չի՛ արդարացնում միջոցները: Դու, որ քրիստոնյա ես, պարտավոր ես միշտ, ինչ վիճակում էլ որ գտնվես, պահել Իմ պատվիրանները եւ վատ բաներ չգործել, այլ միայն բարին: Եթե նպատակդ բարի է, ապա խնդրի՛ր Ինձ, եւ Ես կօգնեմ քեզ, ու դու նրան կհասնես: Միայն թե հույսդ դի՛ր Ինձ վրա, ոչնչից մի՛ վախեցիր, համբերի՛ր, եւ Ես ամեն ինչ կանեմ, ինչպես պետք է. չէ՞ որ Ես Աստված եմ եւ ամենակարող»:

Գիտե՞ք, հեզ ու խոնարհ մարդիկ, նրանք, ովքեր միշտ աշխատում են կատարել Աստծո պատվիրանները, աշխարհի ամենաքաջ ու անվախ մարդիկ են: Ամբողջապես հեզ ու խոնարհ մարդկանց բոլորովին հատուկ չէ վախկոտությունը: Նրանք ոչ մի բանից չեն վախենում՝ ոչ տանջանքներից, ոչ մահվանից, ոչ ունեցվածքը կամ տունը կորցնելուց, ոչ մութ գիշերից, ոչ գազաններից: Նրանք միայն մի բանից են վախենում՝ վատ արարքներ թույլ տալուց, մեղքեր գործելուց, որովհետեւ գիտեն, որ դրանով վշտացնելու եւ նույնիսկ բարկացնելու են Աստծուն: Նրանք ուրիշ ոչ մի բանից չեն վախենում, որովհետեւ շատ մեծ հավատ ունեն Աստծո հանդեպ, իրենց հույսը միշտ դնում են Նրա վրա եւ բոլորովին չեն կասկածում, որ Աստված իրենց կփրկի ամեն փորձանքից, եւ իրենց ոչ մի վատ բան չի պատահի: Իսկ եթե նույնիսկ փորձանք է պատահում, նրանք քաջությամբ դիմանում են ամեն ինչի եւ չեն տրտնջում, այլ Աստծուն փառք են տալիս, որովհետեւ Աստծո հանդեպ շատ մեծ սեր ունեն: Նրանք մտածում են. «Եթե Աստված թույլ է տվել, որ ես այս նեղությունը կամ տանջանքը կրեմ, ուրեմն դա ինձ պետք է, եթե նույնիսկ ես դրա իմաստը չեմ հասկանում»: Նրանք հիշում են Տեր Հիսուսի խոսքը. «Մի՛ վախեցեք նրանցից, ովքեր սպանում են մարմինը, սակայն հոգին սպանել չեն կարող», այսինքն՝ մի՛ վախեցեք ո՛չ չար մարդկանցից ու նրանց անիրավություններից, ո՛չ հիվանդություններից, ո՛չ այլ տեսակ նեղություններից եւ մահվանից: Իսկական քրիստոնյայի համար միայն մեկ մահ կա՝ հոգու մահը, այսինքն՝ երբ հոգին շատ տգեղանում է մեղքերից եւ դառնում Աստծուն ոչ հաճելի: Այսպիսի հոգին անպայման մի օր իր պատիժը կկրի: Ահա այսպես են մտածել սուրբ առաքյալները եւ բոլոր նրանք, ովքեր շատ տանջանքներ են կրել հանուն Հիսուսի եւ սպանվել են, սակայն Նրան չեն դավաճանել: Եվ նրանց հոգիներն ուրախությամբ գնացել են Քրիստոսի մոտ եւ Նրա հետ միասին պիտի գան աշխարհի վախճանին:

Ուրեմն՝ իմացանք, որ հեզերը կարող են նույնիսկ երկրներ գրավել իրենց բարությամբ եւ Աստծո հանդեպ հավատարմությամբ: Սակայն Տեր Հիսուսը հեզերին խոստանում է նաեւ այն երկիրը, որը պիտի ստեղծվի հետո, երբ այս երկիրը, որի վրա ապրում ենք, ոչնչանա: Գալու է ժամանակ, երբ այս երկիրը ոչնչանալու է: Դա տեղի կունենա Տեր Հիսուսի **երկրորդ գալուստից** ու դատաստանից հետո: Երբ Տեր Հիսուսը գա, մեռած մարդկանց հոգիները նորից ստանալու են իրենց մարմինները: Հենց սա էլ մեռելների հարությունն է: Սակայն այդ մարմինները, ի տարբերություն մեր այս մարմնի, ոչ ցավ են զգալու, ոչ հիվանդանալու են, ոչ էլ ուտելու եւ խմելու կարիք են ունենալու: Մենք մեր այդ մարմիններով ապրելու ենք հրեշտակների պես: Այդ ժամանակ, ինչպես մեզ սովորեցնում է «Աստվածաշունչը», երկիրն ու երկինքն այրվելու են, եւ նոր երկինք ու նոր երկիր են ստեղծվելու: Միայն թե, ի տարբերություն մեր այս երկրի, այնտեղ ոչ ոք այլեւս չի կարողանալու մեղք գործել, եւ ոչ ոք չի տանջվելու, չի վշտանալու, չի հիվանդանալու: Այնտեղ մարդիկ միայն սիրելու են միմյանց եւ ուրախ ու երջանիկ են լինելու: Նրանք այլեւս երբեք չեն մահանալու: Նրանք ապրելու են հավիտենական թագավորությունում, որի Արքան Քրիստոսն է:

Ուրեմն, երբ Տեր Հիսուսը երանի է տալիս հեզին, Նա նրան խոստանում է ե՛ւ այս երկրի վրա հաջողություն, ե՛ւ այն երկրում բնակություն, որը հետո պիտի ստեղծվի եւ երբեմն կոչվում է «Ողջերի երկիր»: Այսպես է կոչվում, որովհետ- այնտեղ ոչ ոք այլեւս չի մեռնելու:

Դավիթը՝ իր քաջարիությամբ եւ միեւնույն ժամանակ մեծ հեզությամբ հայտնի այդ մարդը, մի ուրիշ սաղմոսում (26-րդ) իր թշնամիների դեմ օգնություն է խնդրում Տիրոջից եւ ապա ասում է.

**Ես հավատացի, որ կտեսնեմ Տիրոջ բարությունը Ողջերի երկրում:**

**Հույսդ Տիրոջ վրա՛ դիր եւ քաջալերվի՛ր:**

**Թող սիրտդ զորանա, եւ հույսդ Տիրոջ վրա՛ դիր:**

*Շարունակելի*

# Ս. Գրիգոր Լուսավորիչի եւ Տրդատ Մեծի գործունեությունը Նիկիայի ժողովին նախորդած ժամանակաշրջանում

*Սկիզբը՝ էջ 5*

Ագաթանգեղոսը նշել է, որ երբ Տրդատի մասին լսեցին «Կոստանդիանոսը եւ մեծ հայրապետ արքունի դռան արքեպիսկոպոսը, որի անունն էր Եվսեբիոս, մեծ սիրով պատիվ անելով՝ ընդառաջ եկան, եւ իրար հավասարապատիվ ողջույն տալով՝ ուրախ եղան... Կայսր Կոստանդիանոսը զարմացած հարցրեց Տրդատ արքային, թե «ինչպե՞ս կամ որպե՞ս քեզ պատահեցին Աստծու հրաշքները»: Իսկ Տրդատը կայսեր առջեւ պատմեց Աստծու բոլոր գործերը ու նրա արած բարերարությունները... Կայսեր առջեւ ցույց տվեց իր հետ տարված Գրիգորին, թե՝ «Սա այն մարդն է,- ասաց,- որի ձեռքով մենք ճանաչեցինք Աստծու մարդասիրությունը եւ նրա տոկուն համբերության նշանավոր հրաշագործությունները»: Սրա վրա զարմանալով՝ Կոստանդիանոս կայսրը խոնարհեց իր անձը, ընկավ Գրիգորի առջեւ, որպեսզի օրհնվի նրանից եւ բազում վայելուչ մեծարանքներով պատվեց նրան՝ իբրեւ Քրիստոսի խոստովանողի՝ ըստ նրա արժանավորության: Նույնպես եւ Տրդատ արքային՝ իբրեւ սիրելի եղբոր, մեծ ուրախությամբ սեր ցույց տվեց... դաշինք կնքեց նրա հետ՝ միջնորդ դարձնելով Տիրոջ՝ Քրիստոսի նկատմամբ ունեցած հավատը, որպեսզի միշտ հաստատուն պահեն մտերիմ բարեկամությունն իրենց թագավորությունների միջեւ...

Ապա հրաժեշտ տալով ծիրանափառ օգոստականներին ու սուրբ կաթողիկոսին, ընդունելով եկեղեցու ու քաղաքի երեւելի իշխանների ողջույնը եւ ամեն ինչում հաջողելով՝ ելան ոսկեպատ, արքայական կառքերը եւ մեծ շուքով ու բազում վայելչությամբ արքունական ճանապարհներն ընկան: Եվ բոլոր հանդիպած քաղաքներում փառավոր էին երեւում եւ այնտեղ, ըստ թագավորական արժանավորության, մեծամեծ պատիվներ ընդունելով՝ եկան հասան Հայոց երկիրը, Արարատյան գավառը, Վաղարշապատ քաղաքը... Բերեցին այնտեղ տրված պարգեւները՝ ոսկին ու արծաթը եւ բազմագին կարասին, նվեր տվեցին Աստծու եկեղեցու սպասավորությանը եւ սուրբ մարտիրոսների նվիրական տանը դրեցին: ...Եվ մեծ Գրիգորը առաջվա պատկերների մոտ շրջում էր ու հաստատում նրանց ճշմարիտ վարդապետության մեջ»:

Քրիստոսաբանության մեջ վիճաբանությունների մեծ մասը վերաբերել է Հիսուս Քրիստոսի բնությանը: Ճշմարիտ աստվածպաշտությունից շեղված սխալ մոտեցումը ժամանակի ընթացքում իր հետեւորդներին գտավ ի դեմս Պողոս Սամոսացու, Արիոս երեցի եւ Նեստորի եւ նրանց գաղափարակիցների:

«Կնիք Հավատոյ» երկում՝ Հավատո Հանգանակի մեկնությամբ հերձվածների քննադատությանը նվիրված գրվածքում «Աստուած յԱստուծոյ եւ լոյս ի լուսոյ» տողի կապակցությամբ նշված է, որ հանդիմանվեց Պողոս Սամոսացին, որն ասաց, թե Հիսուսը մարդ էր, իսկ «Աստուած՝ յԱստուծոյ ճշմարտէ» տողի հետ կապված ասված է, թե հիրավի նզովվեց Արիոսը, որ ասաց, «թէ՝ Որդի չէր ի բնութենէ Հօր», նմանապես՝ «Ծնեալ, այլ ոչ արարեալ. որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի» տողի կապակցությամբ ասված է, թե դատապարտվելով նզովվեց ամբարիշտն Նեստոր, «որ սոսկ մարդ ասաց զծնեալն ի սրբոյ Կուսէն»: Մովսես Խորենացին V դարի քրիստոսաբանության ոգով Արիոս Աղեքսանդրացու ուսմունքը համարել է չարաչար ամբարշտություն, քանի որ համաձայն նրա՝ Որդին Հորը հավասար չէ եւ ոչ էլ Հոր բնությունից եւ էությունից է եւ չի ծնված Հորից նախքան որեւէ ժամանակ, այլ օտար ոմն է եւ արարած եւ կրտսեր եւ ժամանակի ընթացքում գոյացած: Արիոսի կարծիքը դեռեւս Աղեքսանդրիայում դատապարտվեց 319 եւ 321 թվականներին Աղեքսանդր հայրապետի հրավիրած տեղական ժողովներում, սակայն Արիոսին պաշտպանող հոգեւորականներ էլ գտնվեցին:

Պատմահայրն ուղղակի նշել է, որ Արիոսի պատճառով ինքնակալ Կոստանդիանոսից հրաման ելավ, որ Բյութանիայի Նիկիա քաղաքում քրիստոնյա աշխարհի եպիսկոպոսների ժողով գումարվի: Կայսրը հրովարտակ է ուղարկում Մեծ Հայքի թագավոր Տրդատ Մեծին, որ Սուրբ Գրիգորի հետ միասին գնա ժողովին: Սակայն Տրդատ թագավորը չգնաց, քանի որ լսել էր, որ Շապուհ II-ն արեւելքում դաշնակիցներ էր փնտրում, որպեսզի հարձակվի Հայաստանի վրա: Սուրբ Գրիգորը մինչ այդ հեռացել էր Մանյա այրք քարայրը Բարձր Հայքում եւ լեռնակյաց-մենակյաց կյանք էր վարում աղոթքների եւ պահքի մեջ: Նա նույնպես չցանկացավ գնալ Նիկիա, որպեսզի ժողովից չափազանց պատիվներ չկրի՝ իբրեւ խոստովանող: Տրդատ թագավորն ու Ս. Գրիգոր Լուսավորիչն իրենց փոխարեն ուղարկեցին Արիստակեսին, ինչպես Պատմահայրն է նշել, ճշմարիտ խոստովանությամբ եւ երկուսի գրով, որը, ինչպես Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանն է մեկնել, դավանության հայտարարությունն էր: Արիստակեսը գնալով հանդիպում է Մաժաք-Կեսարիայի արքեպիսկոպոս Մեծն Ղեւոնդիոսին, երբ նա մկրտում էր Գրիգոր Աստվածաբանի հորը՝ Գրիգորին, որը, երբ ջրից դուրս եկավ, նրա շուրջը լույս փայլատակեց: Ոչ ոք բազմությունից այդ չտեսավ, բացի Ղեւոնդիոսից, Արիստակեսից, Եվթաղի Եդեսացուց, Հակոբ Մծբնեցուց եւ Պարսկաստանից եկած Հոհանից, որոնք նույն ճանապարհով ուղեւորվում էին ժողովին:



Մովսես Խորենացու հոգեւոր ընկալմամբ խորհրդանշական էր Նիկիայի ժողովի բացումը նշանաբանող լույսի փայլատակման տեսիլքը:

*Էդուարդ ԴԱՆԻԵԼՅԱՆ*
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

# ՄԱՅՐ ՏԱՃԱՐ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆԸ ԴԱՐԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ



301 թվականին քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն հաստատվելուց եւ 303 թ. Մայր տաճարը կառուցվելուց հետո Սուրբ Էջմիածինը դարձավ Հայ Առաքելական Եկեղեցու նվիրյալ հայրապետների աթոռանիստը:

Այս 1700 տարիների ընթացքում Մայր տաճարը, գտնվելով բազմաթիվ արհավիրքների, պատերազմների կիզակետում, ապրել է անցանկալի ժամանակներ եւ ենթարկվել շատ-շատ փոփոխությունների: Այժմյան նրա տեսքն այն չէ, ինչպիսին եղել է իր նախնական շրջանում: Հաճախակի տեղի ունեցող պատերազմների հետեւանքով առաջացած աննպաստ պայմաններից ելնելով՝ վեհափառների աթոռանիստը Սուրբ Էջմիածնից հարկադրված տեղափոխվել է Արեւմտյան Հայաստանի տարբեր ապահով վայրեր՝ Դվին, Աղթամար, Սիս եւ այլն: 1441 թվականին հոգեւոր եւ աշխարհիկ գործիչների որոշումով տեղափոխվում է Էջմիածին՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից հիմնված Մայրավանքը: Այդ օրվանից մինչեւ օրս Ամենայն Հայոց կաթողիկոսությունը գտնվում է այստեղ:

Իհարկե, Մայր վանքը, նրա շինությունները գտնվում էին անհրապույր եւ ոչ պատշաճ վիճակում: Այդ հանգամանքը մտահոգում է նրա աթոռակալներին, եւ այդ կապակցությամբ նրանք ձեռնամուխ են լինում ինչպես Մայր վանքի, այնպես էլ տաճարի բարենորոգման աշխատանքներին, որոնց շնորհիվ էլ պահպանվել է Մայր տաճարի երկարակեցությունը, փոխվել նրա ճարտարապետական տեսքը եւ դարձել ժամանակակից ճարտարապետական հոյակապ կառույց-համալիր:

Այդ բարեփոխումներն իրականացվել են երջանկահիշատակ հայրապետների նախաձեռնությամբ եւ մեծահարուստ իշխանների, ժամանակի նշանավոր այրերի եւ ժողովրդի տրամադրած միջոցներով:

Համաձայն գրավոր աղբյուրների տեղեկության եւ մասնագետների վկայության՝ Ս. Էջմիածնի Մայր տաճարը մինչեւ 17-րդ դարի սկիզբ նկարագրվել է անգմբեթ, եւ հայտնի չէ, թե տաճարը երբ է զրկվել գմբեթից: Գոյություն ունեն կարծիքներ, որ հնարավոր է՝ այն փլված լինի 1319-ի կամ 1558 թվականի ահեղ երկրաշարժի հետեւանքով: Ըստ պատմիչ Առաքել Դավրիժեցու՝ Մովսես Տաթեւացի կաթողիկոսն իր գահակալության կարճատեւ տարիներին (1629-1632) Ս. Էջմիածնում ձեռնարկում է մեծածավալ աշխատանքներ, որի շնորհիվ Մայր տաճարը պսակվում է իր հիմնենի նկարագրին անհարիր, սակայն կառուցման ժամանակի ոճին համապատասխան կենտրոնական գմբեթով (Վ. Հարությունյան, «Վասն հարատեւման», 2000 թ., էջ 317):

Նրան հաջորդող Փիլիպոս Աղբակեցին իր գահակալության (1633-1655) ժամանակ շարունակում է բարենորոգիչ-շինարարական աշխատանքները: Նա սկսում է տաճարի արեւմտյան ճակատին կից զանգակատան կառուցումը, որը չի կարողանում ավարտել. շինարարությունն իր ավարտին է հասցնում նրան հաջորդող Հակոբ Ջուղայեցի հայրապետը 1658 թ.:

1679 թվականի ավերիչ երկրաշարժը կրկին ահռելի ավերումներ է կատարում ամբողջ Արարատյան տարածքում եւ նրա մերձակայքում: Այդ մասին է հայտնում պատմիչ Զաքարիա սարկավագ Քանաքեռցին (Զաքարիա սարկավագի պատմագրություն, Վաղարշապատ, 1870, հատոր 2-րդ, գլուխ ԾԱ): Չնայած երկրաշարժի հետեւանքով առաջացած ծանր կացությանը՝ Եղիազար Ա Այնթափեցի կաթողիկոսն իր գահակալության (1681-1691) սկզբից նախաձեռնում է վանքում վերականգնողական մի շարք աշխատանքներ՝ հիմնականում Ս. Էջմիածնի Մայր տաճարում: Նա տաճարի հարավային, արեւելյան եւ հյուսիսային խորանների կտուրներին կառուցել է տալիս միանման փոքրաչափ կաթողիկե-զանգակատներ: Տաճարի ներսում կառուցում է Իջման Սեղանը, վերափոխություններ անում հարավային եւ հյուսիսային խորաններում եւ իրականացնում այլ բարեփոխումներ:

Աստվածատուր Համանդեցի կաթողիկոսի (1717-1725) գահակալության ժամանակ եւ նրա նախաձեռնությամբ՝ Սուրբ Սեղանը փոխարինվում է քառայուն մարմարե ծածկույթով, դրվում փղոսկրից զարդարված նոր դուռ: Ընդելուզված այդ դռները՝ իբրեւ արվեստի բարձր նմուշներ, այժմ պահվում ու ցուցադրվում են Հայաստանի ՊՊ թանգարանի սրահներից մեկում: Մայր տաճարի վերանորոգումները միշտ էլ գտնվել են հայրապետների ուշադրության կենտրոնում: Անձրեւները ու խոնավությունը շուրջ վնասներ են հասցրել կառույցին, հատկապես տանիքից հոսող ջրերը: Խոշոր աշխատանքներ են իրականացվում Սիմեոն Երեւանցու (1763-1780) եւ Ղուկաս Կարնեցու գահակալության տարիներին: Նրանց պատվերով նկարիչներ Նաղաշ եւ Հովնաթան Հովնաթանյանները որմնազարդել են Մայր տաճարի ներսը, գմբեթը, թմբուկը, նրանց հարակից մասերը, թաղերը եւ այլն (Վ. Հարությունյան, էջ 81): Հովնաթանն իր աշակերտների հետ նկարազարդել է տաճարի ներսը, ստեղծել Հին Կտակարանի եւ ավետարանական թեմաներով նկարներ, ինչպես նաեւ հայ պատմական գործիչների դիմանկարները (ՀՍՀ, հատոր 4, էջ 73):

Թեեւ մինչ այդ կատարվել էին մի շարք աշխատանքներ, նորոգումներ եւ բարենորոգումներ, սակայն տաճարը կրկին նորոգման կարիք է զգում, որը եւ ձեռնարկվում է Գեորգ Կոստանդնուպոլսեցու հայրապետության տարիներին (1866-1882). տաճարի արեւելյան կողմից կառուցվում են երեք սենյակից բաղկացած թանգարանի մասը, ճեմարանի շենքը եւ այլ կառույցներ:

Մակար Թեղուտցին ձեռնարկում է Մայր տաճարի մուտքերի դռների վերափոխումը: Նրա հանձնարարությամբ թիֆլիսցի ինժեներ Նիկոլայ Գրիգորյանը կազմում է դռների նախագծերը, իսկ ֆինանսական միջոցները հատկացնում են կույսեր Հռիփսիմե Թաիրյանը, Աբամելիքյանը եւ հայր տեր Գեորգ Գալստյանը: Փորագրիչները Ֆրանկե եղբայրներն էին: Դռների աշխատանքներն ավարտվում են 1889 թ. եւ տեղադրվում, որոնք պահպանվում են մինչ օրս:

1920 թվականի մարտի 21-ի առավոտյան տեղի ունեցած երկրաշարժից կրկին տուժում է Մայր տաճարը, փլվում է նրա հարավային կողմի փոքրիկ կաթողիկեն:

Հայաստանում նոր կարգեր ստեղծվելուց հետո տեղի ունեցող իրադարձությունների հետեւանքով Մայրավանքը եւ նրա հոգեւոր սպասավորները գրեթե ամբողջապես մեկուսացվեցին եւ զրկվեցին հավատացյալների հետ շփվելու հնարավորությունից, որը բացասաբար անդրադարձավ նրա հետագա գործունեության վրա: Արգելվում է եկեղեցու եւ նրա հոգեւոր սպասավորների գործունեությունը ինչպես երկրի ներսում, այնպես էլ Սփյուռքի հայրենակիցների հետ: Դրա հետեւանքով Էջմիածինը զրկվում է նաեւ միջոցներ հայթայթելու հնարավորությունից: Աղքատանում է դրամարկղը, միջոցների սղության պատճառով չեն կարողանում իրականացնել անհրաժեշտ բարենորոգումներ եւ վերականգնողական աշխատանքներ: 1950-ականներին որոշ մեղմացում զգացվեց: Չորեքչյան հայրապետի վախճանից հետո հոգեւոր բարձրագույն գահակալ է ընտրվում արժանահիշատակ Վազգեն Առաջին կաթողիկոսը, որի գահակալության երկարամյա տարիները լեցուն էին մեծածավալ շինարարական եւ վերականգնողական աշխատանքներով: Անհրաժեշտության դրդումով, կառավարության որոշմամբ, ստեղծվում է երկրի նշանավոր ճարտարապետներից կազմված հատուկ հանձնաժողով, որի շնորհիվ հետազոտվում, ուսումնասիրվում է Մայր տաճարի վիճակը, կազմվում անհրաժեշտ եզրակացություն, ծրագիր, կառավարության կողմից հատկացվում ֆինանսական միջոցներ, եւ սկսվում մեծածավալ աշխատանքներ, որոնք ավարտվում են 1959 թվականին: Այդ ընթացքում վերականգնվում է Մայր տաճարի հարավային կողմի փլված կաթողիկեն-զանգակատունը, հանվում է Իջման Սեղանի ծածկոցը, որն արարողությունների ժամանակ խանգարում էր Ավագ Սեղանի դիտմանը եւ տեղափոխվում Ս. Գայանե եկեղեցի, որտեղից էլ այն տեղափոխվեց եւ տեղադրվեց Ս. Գրիգոր նորակառույց տաճարում: Եկեղեցու ներսի հատակը սալապատվեց մարմարե սալերով, մաքրվեց եւ վերականգնվեց տաճարի հովնաթանյան ծաղկազարդ տեսքը, Գրիգոր Շլդյանի նախագծով կառուցվում է Ավագ Սեղանը եւ պատվում նույն հեղինակի Աստվածամոր պատկերով, տաճարի ներսում տեղադրվում են էլեկտրական լույսերի բյուրեղապակյա գեղեցիկ ջահեր, եւ կատարվում այլ նորոգումներ: Չնայած կատարված բարենորոգումներին՝ Մայր տաճարը եւ նրա շրջակայքը զգում էին նոր աշխատանքների կարիք՝ մանավանդ որ մոտենում էին քրիստոնեության ընդունման եւ Մայր տաճարի հիմնադրման 1700 տարեդարձները: Այդ նշանավոր տարեդարձները պատշաճորեն կատարելու նպատակով Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գահակալության առաջին իսկ օրից ձեռնարկում է վանքի կառույցները կարգավորելու նոր միջոցառումներ: Վերանորոգվում են տաճարի ներսի հովնաթանյան բոլոր պատկերները, տաճարի ներսում տեղադրվում են էլեկտրաջեռուցիչներ, վերանորոգվում է տաճարի տանիքը, ամրացվում են խարխլված վեմերի մասերը: Ի շարս այս աշխատանքների՝ կառուցվեցին նաեւ ընդարձակ բաց խորանը՝ կողքին կամարակապ վերաալաց մուտքը եւ դրանց հարող հրապարակը եւ այլն:

Այժմ ամեն մի հայ քրիստոնյա, ուխտի գալով Մայրավանք, լցվում է հրճվանքով՝ տեսնելով դարեր ապրած իր հոգեւոր կենտրոնը բարեկարգված եւ վեհորեն կանգնած, եւ հպարտության մեծ հույսով ու հավատով լիցքավորված՝ վերադառնում է՝ իր հետ տանելով իր հոգեւոր մեծ տան, իր հայրերի օրհնությունն ու մխիթարությունը:

**Հենրիկ ԽԱՌԱՏՅԱՆ**



# ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՌՆԵՑԻՆ եւ նրա քարոզչական գործունեությունը

Միջնադարյան հայ մատենագիրները Հովհաննես Գառնեցուն ներկայացնում են իբրեւ նշանավոր ուսուցչապետի եւ քրիստոնեական հավատի ջերմեռանդ քարոզչի: Նա ծնվել է Գառնիում՝ հավանաբար 12-րդ դարի վերջերին: Կ. Գանձակեցու վկայությամբ՝ Հովհաննեսը Այրիվանքի (Գեղարդավանքի) միաբանությունից էր, այստեղ էլ ստացել էր իր կրթությունը եւ դարձել հոգեւորական՝ արժանանալով «կուսակրոն քահանայական աստիճանի»: Այնուհետեւ զբաղվում է կրթական աշխատանքներով, գլխավորում Այրիվանքի դպրոցը: Այդ կրթօջախը հիմնվել էր դեռեւս 8-րդ դարում եւ հայտնի էր ոչ միայն իբրեւ ուսումնա-գիտական, այլեւ երաժշտագիտական կենտրոն: Ժամանակին այստեղ բեղուն գործունեություն էին ծավալել ականավոր մտավորականներ՝ երաժշտագետ-երգահան եւ մատենագիր Գրիգոր Գռզիկը (Այրիվանեցի), մեծահամբավ Ստեփանոս Սյունեցի երկրորդը, վերջինիս քույրը՝ Սահակադուխտը: Գռզիկի եւ Ստեփանոս Սյունեցու մասին Մխիթար Այրիվանեցին պատմում է. «Երկոքին սոքա ընտիրք եւ զարմանալիք, յառաջադէմք ի գիտութիւն գրոց եւ յարուեստս երաժշտականութեան»: Այդ «ընտիր» մտավորականներն իրենց կրթությունը միասին էին ստացել նաեւ Աթենքում՝ ուսումնասիրելով հույն փիլիսոփաներին, Աստվածաշունչը, նրա մեկնությունները, «եօթ ազատ արուեստները»: Վերադառնալով հայրենիք՝ նրանք ծաղկեցնում են Այրիվանքի դպրոցը՝ հիմք դնելով կրթական փայլուն ավանդույթների:

13-րդ դարում այդ ավանդույթները շարունակեցին Հովհաննես Գառնեցին եւ նրանից հետո ուսուցչապետ դարձած Մխիթար Այրիվանեցին: Հովհաննես Գառնեցին հատկապես հետաքրքրվում է երաժշտության խնդիրներով եւ ջանում բարելավել դրա ուսուցումը: Նա ցավ է ապրում, որ «զՍաղմոսս Դաւթի, մանաւանդ թէ զերգս Հոգւոյն Սրբոյ այլ եւ այլ՝ աւելի եւ պակաս, նըւագեն մանկունք եկեղեցւոյ, ոչ ուսեալ զճշմարիտն եւ ոչ իմացեալ զճշգրիտն. եւ այս եղեւ յանհոգութենէ ոմանց եւ ի սխալագիր գրչաց»: Անհոգության հետեւանք էր նաեւ այն, որ ի տարբերություն ուրիշ քրիստոնյա ժողովուրդների, որոնց մոտ ընդունված էր սաղմոսների գրավոր եղանակով կիրառությունը, մեզանում դրանք երգվում էին անգիր՝ պատճառ դառնալով բազում սխալների: «Ամենայն ազգ,- ասում է նա,-գրովք երգեն զՍաղմոսս եւ ունին զաւանդութիւն Սուրբ Հարցն եւ զանսխալութիւն Սաղմոսացն եւ Հայք՝ ի բերան առեալ՝ ասեն վայրապար, քահանայք եւ ռամիկք եւ մանկունք... եւ հաւատաւոր կանայք: եւ երանի թէ ամենայն ոք հրճուեալ նուագէր զհաստատն եւ զստոյգն»:

Այդ մտահոգությամբ Հ. Գառնեցին շրջում է մի շարք վանքերում եւ, ի վերջո, Հաղպատի հռչակավոր մենաստանում գտնում եւ ընդօրինակում է Հովհաննես Սարկավագի ստուգապատում Սաղմոսարանը: Այս նախաձեռնությունը մեծ նշանակություն ունեցավ, որովհետեւ այն դարեր շարունակ տարբեր վայրերում ընդօրինակվում եւ կիրառվում էր: Ուշագրավ է, որ ընդօրինակողները Սաղմոսարանն առավելապես հիշում են Հ. Գառնեցու անունով:

Նա գրել է նաեւ աղոթքներ, խրատներ: 1627 թ. Սիմեոն Լեհացու գրած հիշատակարանում ասվում է, որ իր կազմած «Աղօթամատոյց»-ում տեղ են գտել «բազում եւ ազգի ազգի աղօթք սբ. վարդապետաց, հայրապետաց եւ անուանի սբ. հարց՝ Եփրեմի, Յոհաննու Ոսկեբերանի եւ Յոհաննու Գառնեցւոյն եւ այլ սրբոց»: Նրա հեղինակած շուրջ 150 խրատներն ունեն բարոյադաստիարակչական նշանակություն, ինչպես նաեւ արտացոլում են «դարաշրջանի սոցիալական հարաբերություններն ու իրականության նորմերը»:

Աղբյուրներում հանգամանորեն պատմվում է Հովհաննես Գառնեցու ճգնավորական, քարոզչական գործունեության մասին, որից երեւում է, որ նա, կրթալուսավորական ձեռնարկումներից բացի, մեծ հակում է դրսեւորել դեպի հոգեւորը եւ ժամանակակիցներին ներկայացել որպես ջերմեռանդ հավատացյալ, ասկետական կյանքի մեծ նվիրյալ: Կ. Գանձակեցին գրում է, որ նա «մանկության հասակից արհամարհեց կյանքի ամեն ինչքը, լքեց հարազատներին ու տունը, բնակվում էր ամայի տեղերում. սիրում էր առանձին լինել եւ անդադար խոսել Աստծու հետ՝ իրեն տալով տեսակ-տեսակ ճգնությունների, պասերի, գետնատարած ու պառկած աղոթքների եւ անդադար տեղից տեղ շրջելով ու պատահածներին լուսավորելով»:

Նկատի ունենալով Հ. Գառնեցու հոգեւոր գործունեությունը՝ 17-րդ դարի հեղինակ Դավիթ Բաղիշեցին նրան անվանում է «այր սուրբ եւ ընտրեալ»:

Նշանավոր հոգեւորականի ճանաչմանը նպաստում էր նաեւ «բժշկության շնորհքը»: Պատմիչն ասում է, որ նա, «ձեռքը դնելով ու աղոթելով, բազմաթիվ ախտաժետների բժշկում էր»: Այնքան մեծ էր վստահությունը նրա «բժշկության» հանդեպ, որ շատերը նրանից «իրենց անձերի պահպանման համար թուղթ (թալիսման)» էին խնդրում, եւ նա «գրում էր Սուրբ Երրորդության անունը եւ աղոթքի խորհրդավոր խոսքեր ու տալիս էր նրանց: Իսկ նրանք հավատով առնում եւ կապում էին իրենց վրա»: Ուշագրավ է, որ նրան դիմում էին ոչ միայն քրիստոնյա հավատացյալներ, այլեւ «բազմաթիվ անհավատներ», այսինքն՝ մահմեդականներ:

Սրբակրոն վարքը, մարդկանց բժշկելու զարմանահրաշ կարողությունը նրա շուրջ ստեղծել էին խորհրդավորության մթնոլորտ, որի վկայությունը ժամանակին իր մասին պատմող զրույցներն ու ասույթներն էին: Դրանցից մի քանիսը պահպանվել են Կ. Գանձակեցու աշխատության մեջ եւ այլ ձեռագրերում: Գանձակեցին խոստովանում է, որ անձամբ չի հանդիպել Հովհաննես Գառնեցուն՝ նրանից հեռու գտնվելու պատճառով, սակայն նրա մասին լսել է շատերի պատմությունները, որոնցից վստահելի է համարում Վարդան Արեւելցու խոսքերը, քանի որ նրանք (Վ. Արեւելցին եւ Հ. Գառնեցին - Վ. Կ.) մտերիմներ էին: Հենց Վարդան վարդապետից էլ նա լսել էր Գառնեցու պատմածները՝ իր կյանքի առանձին դրվագների մասին: Դրանցից մեկի համաձայն՝ Հ. Գառնեցին Երուսաղեմ կատարած ուխտագնացության ժամանակ (զրույցի տարբերակներից մեկում նշվում է 1222 թ. - Վ. Կ.), երբ աղոթում էր «Տիրոջ եւ սուրբ Հովհաննես Կարապետի մկրտության տեղում», իրեն դիմում են երեք մահմեդականներ՝ հայրը՝ իր որդիներով, եւ խնդրում իրենց քրիստոնյա մկրտել:

Սկզբում Հ. Գառնեցին տարակուսում է, «որովհետեւ,- ասում է նա,- տեսնում էի, որ նրանք վայրենաբարո մարդիկ են, եւ կարծում էի՝ ծեւանում են»: Սակայն նրանցից ավագը պատմում է, որ իրենք Պարսկաստանի Զանգիան քաղաքից են (Ատրպատականի հարավում Զենջիան), մուղրի (մահմեդական կրոնավոր, Ղուրան կարդացող), իսկ հավատափոխվելու ցանկությունը կապված է այն տեսիլքի հետ, որ նրանց երեւացել է աշտարակի գմբեթից ազան տալու (մահմեդական աղոթքի հրավեր) ժամանակ: Տեսիլքն այսպիսին էր. մի լուսավոր տեղում «փառքի աթոռին», բազմել էր «զարմանալի ու ահեղ թագավորը»՝ շրջապատված «լուսեղենների բազմությամբ»: Նրան երկրպագելու էին գալիս բոլոր քրիստոնյա ազգերը՝ իրենց հոգեւոր առաջնորդների գլխավորությամբ: Թագավորը ողջունում էր բոլորին, սակայն ամենից ավելի մեծարանքների է արժանացնում հայ ազգին ու նրա առաջնորդներին: Ազդվելով տեսիլքից՝ նրանք որոշում են քրիստոնեություն ընդունել եւ անպայման մկրտվել հայերի ձեռքով, քանի որ այդպես «տեսիլքում նշան արվեց»: Նրանք վաճառում են իրենց ունեցվածքը, մեկնում Երուսաղեմ, ուր եւ հանդիպում են Հովհաննես Գառնեցուն: Վերջինս, համոզվելով այս պատմության անկեղծության մեջ, հորը եւ որդիներին մկրտում է Հորդանան գետում՝ «հանուն Հոր եւ Որդու եւ Սուրբ Հոգու»: Ապա նրանք որոշում են գնալ Հռոմ՝ երկրպագելու սուրբ առաքյալներ Պետրոսի եւ Պողոսի գերեզմաններին:

Կ. Գանձակեցին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Հ. Գառնեցու հետագա շրջագայությունների ու քարոզչության մասին: «Նա,- գրում է պատմիչը,- շրջեց բազմաթիվ գավառներ ու քաղաքներ, հասավ Կողոնիա քաղաքը»: Բարեպաշտ հոգեւորականն ամենուր արժանանում է ջերմ ընդունելության, քանզի դրսեւորում էր անզնիվ վարք եւ բժշկում մարդկանց: Այնքան մեծ էր նրա հմայքը, որ «թուրքերից ու արաբներից շատերը գալիս էին նրա մոտ ու մկրտվում էին սքանչելի վարքի ու բժշկության համար, որ նա անում էր»:

Հ. Գառնեցու համբավն ու հաջողությունները տագնապ են առաջացնում մահմեդականների մոտ, ուստի Կողոնիա քաղաքի իշխանը, ձերբակալելով նրան ու մի քահանայի, փորձում է այրել խարույկի վրա: Սակայն մի դիպվածով նա ազատվում է եւ շարունակում իր շրջագայությունները: Վերջապես հասնում է Կիլիկիայի հայկական թագավորություն եւ հանգրվանում Հռոմկլայում՝ հայոց կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրաբերդցու (1221-1267 թթ.) մոտ: Կաթողիկոսը, որ գիտեր, անշուշտ, Հ. Գառնեցու մասին, «ուրախությամբ մեծ պատվով ընդունեց նրան եւ թույլ չտվեց որեւէ տեղ գնալու»: Այստեղ 1263 թ. վախճանվում է՝ հասնելով «անթառամ պսակի ու անվախճան կյանքի»:

Հովհաննես Գառնեցու քարոզչական գործունեությունը, որն իրականացվել է նաեւ այլազգիների շրջանում, Հայ եկեղեցու պատմության ուշագրավ էջերից է եւ դեռեւս իր կենդանության շրջանում դարձել էր լեգենդ՝ պատմվելով կրոնադավանաբանական բնույթի զրույցներում:

*Վարուժան ԿԻՐԱԿՈՍՅԱՆ*
*Մանկավարժ. գիտ. թեկնածու*

## ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ԱՆՏՈՆԻ ՍՈՒՐՈԺՍԿԻ

# ՏՈՒՆՆ ԱՍՏԾՈ

*Սկիզբը՝ թիվ 10-12*

Անցյալ անգամ խոսեցինք եկեղեցու մասին եւ փորձեցինք բացատրել եկեղեցու անունը որպես կիրիակոն, որպես էկլեսիա, որպես Աստծո լիիրավ ժողովուրդ եւ այլն: Եվ ավարտեցինք համառոտ մի դիտողությամբ այն մասին, թե, ըստ էության, եկեղեցին հանդիսանում է Աստված-մարդկային մի համայնք, որը, որքան էլ հանդուգն հնչի, հավասարապես եւ աստվածային է եւ մարդկային: Մինչ առաջ կանցնենք՝ ուզում եմ այստեղ մի փոքր կանգ առնել:

Եկեղեցին կարելի է համարել նաեւ որպես Աստծո եւ մարդու հանդիպման վայր, բայց ոչ թռուցիկ, այլ վերջնական հանդիպման վայր: Աստծո Որդու մարդեղությունը, որով մարմնապես Աստվածության ողջ լիությունը բնակվեց Նրա մեջ (Կող. Բ 9), հանդիսանում է եկեղեցու հենց կենտրոնական փորձառությունը: Բացի դա, Իր հարության հիսուներորդ օրը Փրկիչը Հորից եկեղեցի առաքեց Սուրբ Հոգուն, Ով այնտեղ փառաբանվում, այնտեղ ապրում ու գործում է: Եվ մենք էլ Քրիստոսով ու Սուրբ Հոգով միավորվում ենք Աստծո եւ Հոր հետ: Այսպիսով, Աստծո ներկայությունը եկեղեցում, հանձին Քրիստոսի եւ Սուրբ Հոգու, ակնհայտ է, եւ որն էլ մեզ տանում է դեպի մեր Երկնային Հայրը:

Ինչ վերաբերում է մարդկությանը, ապա մենք Նրան եկեղեցում տեսնում ենք երկակի կերպով: Քրիստոսի մեջ մենք տեսնում ենք մարդուն՝ իր լիությամբ ու կատարելությամբ, քանզի միայն այն, որ մարդը մեկ է Աստծո հետ, արդեն իսկ խոսում է Նրա լիովին մարդ եւ Իր կոչմամբ կատարյալ լինելու մասին: Եվ իիրավի, մարդկության պատմության մեջ միակը, ով հասավ այդ սահմանին, կամ ավելի ճիշտ՝ ով բացահայտեց այդ սահմանը, դա Քրիստոս Փրկիչն էր, Նա, Ով միաժամանակ հավասարապես ե՛ւ մարդ է՝ ճշմարիտ ու կատարյալ, ե՛ւ ճշմարիտ ու կատարյալ Աստծո Որդի՝ Աստված: Այսպիսով, մենք եկեղեցում Քրիստոսի միջոցով տեսնում ենք, թե ինչի է կոչված լինելու մարդը եւ ինչ է մարդը: Հովհան Ոսկեբերանն իր քարոզներից մեկում հստակորեն ասում է. «Եթե ուզում եք իմանալ, թե ինչ բան է մարդը՝ մի նայեք թագավորների գահերին եւ մեծատոհմիկների տներին, այլ բարձրացրեք ձեր հայացքներն Աստծո գահին, եւ այնտեղ դուք կտեսնեք Իր փառքով բազմած Մարդու եւ Աստծո Որդուն՝ Հիսուս Քրիստոսին»:

Սակայն եկեղեցում կա նաեւ մեկ այլ մարդկություն: Դա մեր, անկատար մարդկությունն է, մեղավոր, դեպի իր կոչումը ձգտող կամ էլ հակառակը՝ դրանից գնալով հեռացող մարդկությունն է: Էմպիրիկ մարդկությունը, որին մենք գիտենք, այս առումով երկիմաստ է, քանի որ նրան տրված է ազատ ընտրության իրավունք՝ Աստծո եւ Նրա հակառակորդի, կյանքի ու մահվան, բարու եւ չարի միջեւ, իր կոչմանը ծառայելու եւ նրանից հեռանալու, նրա կողքով անցնելու միջեւ: Ուստի, քանի որ մենք նայում ենք եկեղեցուն էմպիրիկ տեսանկյունից, ապա այն մեզ ներկայանում է որպես լույս խավարում, որի մասին Հովհան Ոսկեբերանն ասում է, թե՝ հունարենում այստեղ բառախաղ է. մի կողմից խավարը չի ընդունում, իսկ մյուսից՝ չի կարող նրան նվաճել («Լույսը խավարի մեջ լուսավորում է, եւ խավարը նրան չնվաճեց». Հովհ. Ա 5):

Այս առումով կարելի է ասել, որ եկեղեցին էսխատոլոգիական (վախճանաբանական) երեւույթ է: Այս բառը կրկին հունարեն է: Էսխատոնը (վերջին) երկու բան է նշանակում՝ կենսագործված կամ էլ հաստատակամորեն կենսագործելի: Կատարվածը դա Աստծո խոսքի մարմնացումն է: Ինչ-որ իմաստով ժամանակների վախճանը (ոչ որպես «ավարտ ժամանակի», այլ այն, ինչը պետք է ի վերջո հայտնվի ժամանակի մեջ) արդեն կատարված է: Մի Մարդ կա միայն, որ աստվածացավ մինչեւ վերջ: Պետրոս առաքյալի՝ մեզանից յուրաքանչյուրին հասցեագրված խոսքերով՝ Աստվածային բնության հաղորդակից լինելը մեր կոչումն է (Բ Պետր. Ա 4):



*Շարունակությունը՝ էջ 8*



## ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ԱՆՏՈՆԻ ՍՈՒՐՈԺՍԿԻ

# ՏՈՒՆՆ ԱՍՏԾՈ

*Սկիզբը՝ էջ 7*

Իր մարդկությամբ Քրիստոսն արդեն այն է, ինչին կոչված է դառնալու յուրաքանչյուր մարդ եւ կարող է դառնալ, եթե միայն արձագանքի իր կոչմանը: Առայժմ դեռ այդ կենսագործելիությունը տեսանելի է միայն մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մեջ: Սակայն, այնուհանդերձ, մյուս կողմից էլ Քրիստոսի հայտնությունը, Աստծո Որդու մարդեղությունը որոշիչ իրադարձություն է, քանզի այն տարանջատումը, այն անդունդը, որ նախկինում գոյություն ուներ Աստծո եւ մարդու միջեւ, արդեն կարծես թե փակված է: Եվ նույնիսկ փակված է առավել մեծ չափով, քան մենք կարող ենք պատկերացնել:

Դուք հավանաբար հիշում եք Ավագ շաբաթվա արարողակարգում Քրիստոսի դժոխամուտը: Հինկտակարանյան դժոխքն այն դժոխքը չէ, որը նկարագրվում է Դանթեի մոտ եւ կամ կիսաբանահյուսական-կիսաաստվածաբանական գրականության մեջ: Դժոխքը չարչարանաց վայր չէ, պատիժ կրելու տեղ չէ. այն առավել սարսափելի մի բան է: Այն գեհենը, որ նկարագրված է Հին Կտակարանում, մի վայր չէ, ուր գնում են մեղավորները, այլ վայր է, որտեղ հաստատվում են բոլոր մեռնողները, քանզի նրանք բոլորն էլ բաժանված են Աստծուց: Այո, այդ խորխորատներում ասես կան տարբեր բաժիններ:

Դուք հավանաբար հիշում եք հարուստի ու Ղազարոսի մասին առակը, թե ինչպես Ղազարոսը Աբրահամի գրկում հանգստանում էր, այսինքն՝ հանգստարանում էր, մինչդեռ հարուստը տառապում էր, ողորմություն խնդրում նրանցից, որոնց ինքը մերժել էր ողորմություն տալ: Եվ, սակայն, թե՛ մեկը եւ թե՛ մյուսը գտնվում էին Աստծուց սարսափելի հեռավորության վրա, մի վայրում, ուր Աստված բացակայում է: Մնում էր միայն լինել հավատով Աստծուն կապված, եւ ներքին հավասարմությամբ, աղոթքով, իր անցյալ կյանքի արդարությամբ, սպասել (եւ դա վճռորոշ պահ է) Մեսիային՝ Փրկչին, Ով պիտի փշրեր Աստծո եւ սեփական կամքով Աստծուց հեռացած մարդու միջեւ եղած միջնապատը:

Եվ Քրիստոս իջնում է հենց այդ խորախոր վիհը, եւ այստեղ է ահա, որ բացահայտվում է սաղմոսի այն հատվածը, ուր ասվում է. *«Ո՞ւր գնամ ես Քո հոգուց, կամ Քո դեմքից ո՞ւր փախչեմ: Եթե երկինք ելնեմ, այնտեղ ես Դու, եթե դժոխք իջնեմ, դրան էլ մոտ ես»* (Սաղմ. ՃԼԸ 7-8): Սա մարգարեական խոսք է, քանզի այն հակադրվում է դժոխքի մասին ժամանակին եղած հենց այն՝ հինկտակարանյան պատկերացումներին, ըստ որի՝ դժոխքը մի վայր է, ուր Աստված չկա, ուր կա միայն Աստծո հանդեպ կարոտ, կա հավատ, երկրպագություն: Սաղմոսի այդ երգը բացատրվում է հենց այսպես. այն մարգարեորեն ասում է, որ Քրիստոսի խաչելությունից հետո, երբ դեռ Նրա աստվածացած մարմինը պառկած էր գերեզմանում, Քրիստոսի մարդկային հոգին՝ Իր աստվածային փառքով, իջավ դժոխք եւ այն ամբողջովին լցրեց Իրենով:

*«Մահը կուլ գնաց հաղթության: Ո՞ւր է, մա՛հ, քո հաղթությունը, ո՞ւր է դժոխք, քո խայթոցը»* (Ա Կորնթ. ԺԵ 55):

Այս իմաստով, երբ մենք խոսում ենք մարդկության եւ եկեղեցու մասին, չպետք է մոռանանք, որ մարդկության մեջ կա մի բացարձակ պայծառ Ջահ, եւ դա Քրիստոսն է, իսկ հետո նոր գալիս է մնացյալ ողջ մարդկությունը, որ գտնվում է պայքարի մեջ, կայացման մեջ՝ ընկնելով, բարձրանալով, գնալով դեպի Աստված, կամ էլ Նրանից հեռանալով: Եվ այդ իսկ պատճառով, մարդկությունն ու Աստվածությունը միավորվում են մեկ խորհրդավոր համայնքում. բայց այդ համայնքը դեռեւս կայացման մեջ է: Դա այն հանրությունն է, որին Սամարինը կոչում է սիրո օրգանիզմ, քանի որ Աստված, որպես անճառելի սեր, այն լցնում է Իրենով: Աստված այդ հանրության կյանքն է, Աստված Նա է, Ով կամաց-կամաց կիսախավարը վերածում է կիսալույսի, կիսալույսը՝ լիալույսի: Սակայն այն, ինչ տեղի ունեցավ Աստծո Խոսքի մարդեղության օրը, Աստվածահայտնության, այսինքն՝ Քրիստոսի մկրտության օրը, Նրա խաչելության, մահվան, դժոխք իջման, հարության, համբարձման օրերին, որպես խմորիչներ՝ գործում են մարդկության պատմության մեջ:

Եվ ահա Քրիստոսով, որոշակիորեն Նրա սրբերով, ինչպես նաեւ սակավ մեղավորներով, որոնք ձգտում են դեպի Աստված, եկեղեցին դառնում է այն, ինչին կոչված է լինելու: Սուրբ Եփրեմ Ասորին, խոսելով եկեղեցու մասին, այն բնութագրում է այսպես. *«Եկեղեցին սրբերի հանրություն չէ. այն ապաշխարող մեղավորների ամբոխ է...»*:

Այստեղ որոշող բառը, անշուշտ, «ապաշխարողն» է, որովհետեւ բավական չէ լինել մեղավոր, այլ պետք է լինել Աստծուն դիմող մեղավոր: Եվ «ապաշխարող» բառն էլ այն մասին է խոսում, թե՝ նա չէ ապաշխարողը, ով՝ լաց է լինում իր վրա, տրտնջում իր մեղքերից ու չի դառնում դեպի Աստված, չի ձգտում Նրան: Մենք անվերջ վշտանում ենք մեզ համար, բայց պարտադիր չէ, որ դրա արդյունքում օտարվենք նրանից, ինչը մեզ թե՛ ստրկացնում է, թե՛ վիրավորում, թե՛ տանջում, թե՛ սպանում, միայն նրա համար, որ մենք դառնանք դեպի Աստված, ձգտենք Նրան՝ մեր՝ թեկուզ կիսահույս ցանկությամբ: Իսկ եկեղեցին բաղկացած է այն մարդկանցից, ովքեր զղջում են, բաղձալով ձգտում Աստծուն, աղերսում Նրան...

*Շարունակելի*

*Թարգմանությունը՝*
**Գոհար ՎԱՐԴԱՆՅԱՆԻ**

---

# «ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՆՃԱՐԸ»

Երեւանի «Գրիգոր Տաթեւացի» ՍՊԸ տպարանում լույս է տեսել ֆրանսիացի մեծ գրող, 19-րդ դարի առաջին կեսի հասարակական եւ քաղաքական ականավոր գործիչ Ֆրանսուա-Ռընե դը Շատոբրիանի «Քրիստոնեության հանճարը» (ընտիր հատվածներ) գիրքը: Այն ֆրանսերենից թարգմանել եւ ծանոթագրել է Պարգեւ Շահբազյանը: Գիրքը լույս է տեսել մեկենասությամբ գերաշնորհ տեր Շահան արքեպիսկոպոս Սվաճյանի (Կոստանդնուպոլսեցի):

Հրաշալի այս գրքի սկզբում թարգմանչի կողմից ներկայացվում է Շատոբրիանի համառոտ կենսագրականը:

Ֆրանսուա-Ռընե դը Շատոբրիանը ծնվել է 1768 թ. Ֆրանսիայի Բրետան նահանգի Սեն Մալո նավահանգստային փոքրիկ քաղաքում: Նրա մանկությունն անցել է գավառական քաղաքների հատուկ-անձուկ միայնության ու առանձնության պայմաններում, ինչի հետեւանքով եւ նա ձեւավորվել է որպես մելամաղձոտ ու երազկոտ բնավորության տեր երիտասարդ: Կարճ ժամանակահատված ծառայելով Նավարայի զորագնդում՝ ապագա գրողը թողնում է այն եւ տեղափոխվում Փարիզ: Այստեղ հաստատում է ծանոթությունների լայն շրջանակ՝ հայտնի գրողներ, արվեստագետներ, մտավորականներ, հրապուրվում բարձրաշխարհիկ կյանքի բոլոր հետաքրքրություններով՝ օպերա, թատրոն, պարահանդեսներ, որսորդություններ, սակայն նրա իսկական տարերքը եւ կոչումը գրականությունն էր, որին նա նվիրվում է անդուլ եռանդով ու իր մտավոր բարձր կարողությունների ողջ ուժով: Այդ տարիներին Շատոբրիանն ուսումնասիրում է հույն, հռոմեացի փիլիսոփաների աշխատությունները, Վերածննդի դարաշրջանի արվեստի եւ գրականության գործերը, ինչպես նաեւ ֆրանսիացի դասական գրողների ստեղծագործությունները, ինչի շնորհիվ մելամաղձոտ ու երազկոտ պատանին վերածվում է եռանդուն ու նպատակասլաց, մտավոր ու հոգեւոր մեծ կարողություններով օժտված երիտասարդի, ով իր առաջին փորձերն է կատարում գրական ասպարեզում:

Փարիզում՝ հեղափոխական բուռն ու ալեկոծ իրադարձությունների շրջապտույտում, երբ կործանվում էին միապետական դարավոր պատկերացումներն ու ավանդույթները, երբ իր հերոսներին բուռն խնդությամբ ու դափնեպսակով դիմավորող ամբոխը հաջորդ օրը նույն խանդավառությամբ նրանց ուղեկցում էր դեպի գիլիոտին, Շատոբրիանը, հասկանալով, որ ինքը՝ որպես ազնվական, կարող է նկատվել հետադիմական, ձեռնարկում է ճանապարհորդություն դեպի Ամերիկա: Դրա արդյունքում ծնվում է նրա «Ճանապարհորդություն Ամերիկայում» գիրքը: Ամերիկայից վերադարձը Եվրոպա Շատոբրիանի համար սկիզբ է դառնում դժվարին տարիների մի շղթայի, որը, սակայն, լինելով գոյատեւման պայքարի ու նյութական կարիքի ծանր ժամանակաշրջան, միաժամանակ ծնունդ է տալիս «Էսսե հին եւ արդի հեղափոխությունների մասին» երկին, ուր հեղինակի մտորումներն են իր ժամանակի իրադարձությունների շուրջ, որոնք նա փորձում է հասկանալ եւ բացատրել՝ հին պատմական դեպքերի ու իրադարձությունների հետ զուգահեռներ անցկացնելով: Այս տարիներին եւ ձեւավորվում են Շատոբրիանի հայացքները քրիստոնեության, մարդկության պատմության, գրականության եւ արվեստի վրա ունեցած դրա անգնահատելի դերի ու հսկայական նշանակության, քրիստոնեական հոգեւոր արժեքների վերակենդանացման եւ հասարակության՝ դրանցով ապրելու անհրաժեշտության մասին: Լոնդոնում ուրվագծվում է «Քրիստոնեության հանճարը» աշխատությունը, որը տպագրվում է նրա՝ 1800 թ. Փարիզ վերադառնալուց մի քանի տարի անց: Գիրքը հասարակության ջերմ ընդունելությանն է արժանանում՝ Շատոբրիանի համար ապահովելով մեծ համբավ: Գիրքը գրավում է նաեւ կայսր Նապոլեոն Բոնապարտի ուշադրությունը, ով եւ Շատոբրիանին կանչում է դիվանագիտական ծառայության:




Շատոբրիանը, սակայն, թողնում է իր քաղաքական գործունեությունը՝ լսելով Անգենի դքսի սպանության լուրը: Հրաժարական ուղարկելով կայսրին՝ ձեռնարկում է նոր ճանապարհորդություն՝ այս անգամ Արեւելք՝ Հունաստան, Երուսաղեմ, Թուրքիա, Իսպանիա, որի տպավորություններն ամփոփում է «Մարտիրոսներ» եւ «Ուղեգրություն Փարիզից դեպի Երուսաղեմ» գրքերում: 1811 թ. Շատոբրիանն ընտրվում է Ֆրանսիական ակադեմիայի անդամ: Նրա «Բոնապարտի եւ Բուրբոնների մասին» հայտնի պամֆլետը պատճառ է դառնում, որպեսզի նա Նապոլեոնի՝ Էլբա կղզուց փախուստի եւ 100-օրյա կառավարման ընթացքում հեռանա Ֆրանսիայից: 1815 թ. վերադառնալով Ֆրանսիա՝ Շատոբրիանը նորից անցնում է դիվանագիտական ծառայության, այս անգամ՝ Լյուդովիկոս 18-րդի մոտ. նա Ֆրանսիայի դեսպանն է դառնում Բեռլինում, Լոնդոնում, Հռոմում, աշխատում է նաեւ արտաքին գործերի նախարարի պաշտոնում: Սակայն Շատոբրիանը ոչ մի պահ չի դադարեցնում գրական գործունեությունը: 1830 թ. հուլիսյան հեղափոխության ժամանակ մերժելով միանալ թագավոր Լուի Ֆիլիպին, ինչպես նաեւ հանրապետականներին, հիասթափված ամենուրեք տիրող ստորաքարշությունից, անձնապաշտությունից ու նյութապաշտությունից՝ Շատոբրիանը նոր ճամփորդության է մեկնում Եվրոպայով, որտեղից վերադառնալուց հետո ընդմիշտ թողնում է քաղաքական գործունեությունը եւ նվիրվում միայն գրական աշխատանքին: Նա լրացնում, հղկում եւ ավարտին է հասցնում «Անդրշիրիմյան հիշողություններ» գործը, որը տպագրվում է արդեն նրա մահից հետո՝ համաձայն իր կամքի: Կյանքի վերջին տարիներն անցկացնելով հասարակությունից կտրված եւ առանձնության մեջ՝ 80-ամյա Շատոբրիանը մահանում է 1848 թ.:

Պարգեւ Շահբազյանի թարգմանությամբ լույս տեսած «Քրիստոնեության հանճարը» գիրքն առանձին վերնագրերով հատվածներ են Շատոբրիանի համանուն մեծածավալ գրքից: Այն ստեղծվել է Ֆրանսիայի պատմության առանցքային եւ միաժամանակ չափազանց դժվարին, խառնաշփոթ ու իրարամերժ իրադարձություններով եւ միմյանց անընդմեջ հերթափոխող գաղափարախոսություններով լի ժամանակաշրջանում, երբ հասարակությունը, շփոթված հեղափոխության քաոսից, կորցրել էր նախկին պատկերացումները, ավանդույթները, ոտնատակ էր արել հոգեւոր արժեքները, սակայն դրանց փոխարեն առաջարկվող նոր արժեքներն ու չափանիշներն ի վիճակի չէին լցնելու գոյացած դատարկությունը: Այս պայմաններում է Շատոբրիանը ձեռնարկում «Քրիստոնեության հանճարը» հիանալի երկի ստեղծմանը՝ նպատակ ունենալով քրիստոնեական գեղեցկությունները մատնանշելու միջոցով ապացուցել եւ հաստատել, որ քրիստոնեությունը բոլոր կրոններից անհամեմատ բարձր է ու վեհ, եւ ոչինչ չկա նրանից առավել գեղեցիկ, հրաշալի, սիրելի ու վսեմ, քանզի այն ճշմարտությունն է:

Եվ ինչպես Շատոբրիանի գիրքը ժամանակին լույս էր տեսել ճիշտ այն պահին, երբ այն առավե՛լ անհրաժեշտ ու կարեւոր էր հասարակության համար, այնպես էլ այժմ «Քրիստոնեության հանճարի» հայերեն թարգմանությունը մեզ հասավ ճիշտ ժամանակին, քանզի մեր հասարակությունն էլ կարիք ունի վերակենդանացնելու քրիստոնեական արժեքները, վերարժեւորելու դրանք եւ համաձայն դրանց վերաիմաստավորելու իր կյանքը:

*Գ. Ա.*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբուլցյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԴԿ

**Հեռախոս՝**
**(0+31) 56780, 54510**
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Ստոր. է տպագր. 16. 7. 2003թ.

**Տպաքանակը՝ 2500**
**Գինը՝ 50 դրամ**